Նա ընդունում էր իր հիւրերին առանց տեղից շարժելու, միայն ձեռքը մեկնում էր համբուրել տալու համար: Բայց երբ Ասլանը ներս մտաւ, նա կիսով չափ տեղից բարձրացաւ եւ, փոխանակ աջը համբուրել տալու, բռնեց Ասլանի ձեռքը, բարեկամաբար սեղմեց եւ փաշաի մօտ նստելու տեղ ցոյց տուեց: Աթոռներ չկային, բոլորը նստած էին գորգերի վրայ: Ես կանգնած մնացի դռան ձախ կողմում, իսկ աջ կողմը բռնած էր փաշայի թիկնապահը: Երկուսս էլ զինուած էինք, երկուսս էլ ձեռքներս դրած ունէինք մեր սրերի վրայ: Դա մի առանձին պատիւ է, երբ թիկնայ — պահը կանգնում է նոյն սենեակում, որտեղ ընդունուած է նրա տէրը: Հասարակ անձանց թիկնապահները կամ նրանց ծառաները սպասում են նախասենեակում, որպէս քուրդ բէկի ծառան:

Սովորական ողջագուրանքից յետոյ, որի միջոցին իւրաքանչիւրը անդադար ձեռքը խոնարհեցնում էր եւ յետոյ դնում ճակատին ի նշան խորին յարգանաց, փաշան մի առանձին ժպիտով, որ խիստ կոշտ էր թւում նրա կոշտ դէմքի վրայ, դարձաւ դէպի Ասլանը այդ խօսքերով:

— Ես դիտաւորութիւն ունէի անձամբ ձեզ մօտ գալ, պարոն բժշկապետ, իմ խորին շնորհակալութիւնը յայտնելու ձեր հրաշալի բժշկութեան մասին: Ես այժմ կատարելապէս առողջ եմ:

— Դուք ինձ ամաչացնում էք, վսեմաշուք տէր, միթէ՞ իմ չնչին ծառայութիւնը այդքան մեծ արժէք ունէր, — պատասխանեց Ասլանը:

— Աւելի եւ աւելի մեծ արժէք ունէր, — կրկնեց նա գլուխը շարժելով: — Հաւատացնում եմ ձեզ, պարոն բժշկապետ, եթէ ես չգիտենայի, որ Մուհամմեդը մարգարէների վերջինն է եւ կատարածը, թէ նրանից յետոյ այլ մարգարէ չէ գալու, անշուշտ պիտի համարէի ձեզ աստծոյ մարգարէներից մէկը, որ, աշխարհ գալով, հրաշքներ է գործում:

Փաշայի այդ երկդիմի շողոքորթութեանը Ասլանը պատասխանեց.

— Հրաշքների դարը անցել է, վսեմաշուք տէր, այժմ գիտութեան եւ արհեստի դարումն ենք ապրում, որոնք աւելի մեծ գործեր են կատարում, քան գերբնական հրաշքները:

Փաշան դարձեալ իր ասածն էր պնդում:

— Հրաշքների դարը ինձ համար չէ անցել, պարոն բժշկապետ, ես հաւատաւոր մարդ եմ: Ստամբոլում ամբողջ հինգ տարի տանջուեցայ, հասկանո՞ւմ էք, ամբողջ հինգ տարի. սուլթանի ամենանշանաւոր բժիշկները աշխատում էին իմ վրայ, բայց ոչինչ օգուտ չտեսայ. իսկ ձեր մի քանի դեղերով բոլորովին փրկուեցայ ես: